ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 22.09.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 96/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Մագտոնի» ՍՊԸ-ի 02.09.2016թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-96/16 բողոք) և կից փաստաթղթերը, ՀՀ առողջապահության նախարարության 15.08.2016թ. ԱԿ 9003-16 գրությամբ տրամադրված տեղեկատվությունը՝ ախտահանիչ նյութերի վերաբերյալ, տրամադրված տեղեկատվության վերաբերյալ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի 17.08.2016թ. թիվ 08-258 գրությամբ պահանջված և ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի կողմից 09.09.2016թ. թիվ ԱԿ/22.2/9887-16 գրությամբ տրված պարզաբանումը, «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի հանձնաժողովի ախտահանիչ միջոցների համարժեքության գնահատման վերաբերյալ 22.09.2016 թվականին կազմված համեմատական եզրակացությաունը, Ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, Ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), ինչպես նաև ԳԲԽ-96/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 19.09.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Մագտոնի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

«Մագտոնի» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 02.09.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 25.08.2016թ կայացած նիստի թիվ 3 որոշումով գնման ընթացակարգի թիվ 2, 50, 51 և 53-րդ չափաբաժիններով հաղթող է ճանաչել «Խաչպար» ՍՊԸ-ին և նույն նիստի թիվ 4 որոշմամբ հաստատել նշված չափաբաժիններով պայմանագիր կնքելու մասին որոշումը: «Մագտոնի» ՍՊԸ-ն գտնում է, որ գնահատող հանձնաժողովը պետք է ամփոփեր «Խաչպար» ՍՊԸ-ի հայտի գնահատման արդյունքները նշված չափաբաժիններով, և միայն ամբողջական հայտի բավարար գնահատելուց հետո կարող էր ճանաչել ընտրված մասնակից: Միաժամանակ «Մագտոնի» ՍՊԸ-ն գտնում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի ամբողջական հայտը չի կարող գնահատվել բավարար, քանի որ առկա է առաջարկված ապրանքների տեխնիկական բնութագրերի անընդունելի տարբերություններ:

«Մագտոնի» ՍՊԸ-ն բողոքով խնդրել է դադարեցնել «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.08.2016թ կայացած նիստի «Խաչպար» ՍՊԸ-ին ընթացակարգի թիվ 2, 50, 51 և 53-րդ չափաբաժիններով հաղթող ճանաչելու վերաբերյալ թիվ 3 որոշումը և նշված չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը: Պահանջել գնահատող հանձնաժողովից իրականացնել «Խաչպար» ՍՊԸ-ի հայտի ամբողջական գնահատում: Միաժամանակ Ընկերությունը խնդրում է կասեցնել պայմանագիր կնքելու գործընթացը՝ կիրառելով ժամանակավոր միջոց:

«Մագտոնի» ՍՊԸ-ն որպես բողոքի իրավական հիմք նշել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածի՝

•1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և, հրավերով սահմանված դեպքերում ու կարգով, գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

•6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ:

Գնման ընթացակարգի հրավերի նախաբանում նշված է, որ նույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Ընկերությունը նշել է նաև, որ գնման ընթացակարգի հրավերով նախատեսված 2, 50, 51 և 53-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում ներկայացված են ապրանքի ազդող նյութերը, դրանց չափաբաժինները, կիրառման նպատակները Պատվիրատուի մոտ և այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ նյութերի քանակները՝ գնման առարկայի անհրաժեշտ քանակը:

«Խաչպար» ՍՊԸ-ն մասնակցելով գնման ընթացակարգի թիվ 2, 50, 51 և 53-րդ չափաբաժիններին ներկայացրել է՝ ըստ իրեն «համարժեք» ապրանքներ:

Գնահատող հանձնաժողովը 27.07.2016թ. կայացած նիստին ճիշտ է գնահատել համարժեքությունը՝ դիտարկելով ապրանքների և ազդող նյութերը և վերջնական սպառման համար անհրաժեշտ ստացվող լուծույթների քանակական տարբերությունները և մերժել «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը: Սակայն հետո վերանայել է իր որոշումը և 25.08.2016թ կայացած նիստին առանց հայտը բավարար գնահատելու «Խաչպար» ՍՊԸ-ին ճանաչել է հաղթող՝ խախտելով վերը նշված իրավական ակտերի դրույթները:

Գնման ընթացակարգում համարժեքությունը գնահատելիս՝ պարտադիր պետք է համեմատվեն նաև պատվիրատուի կողմից նախատեսված քանակները և մասնակցի կողմից կատարված քանակական առաջարկը՝ եթե այդպիսին առկա է, համեմատման հիմքում դնելով ապրանքի վերջնական սպառման տեսքը, չափը և այլ, սույն դեպքում նաև ստացվող այն աշխատանքային լուծույթի քանակը, որը ապահովում է պատվիրատուի կարիքին համապատասխան քանակ (օրենքի 3-րդ հոդվածի դրույթ) : «Մագտոնի» ՍՊԸ-ն ներկայացրել է հրավերով նախատեսված և մասնակցի կողմից առաջարկված տվյալների տարբերության վերաբերյալ համեմատական աղյուսակ.

Չափաբաժնի համարը	Հրավերով նախատեսված նյութի տվյալները	Մասնակցի առաջարկված նյութի տվյալները	Համեմատման արդյունքները և համարժեք համարելու դեպքում խախտվող իրավական ակտերի դրույթները
2	Ախտահանիչ նյութ Պրեսեպտ կամ համարժեք	Ախտահանիչ նյութ Դիմաքս քլոր	Տարբեր չափաբաժիններով ազդող նյութեր և Պատվիրատուի կարիքից քիչ (քանակական) առաջարկ: Օրենքի 3-րդ, հոդված և «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդված
	Պահանջված քանակը 60000 հատ	Առաջարկված քանակը 60000 հատ	
	Ազդող նյութ է հանդիսանում դիքլորիզոցիանի նատրումական աղը, որը կազմում է հաբի քանակության 50%-ը: Հաբը կշռում է 5 գրամ, որի մեջ ազդող նյութի քանակը 2,5 գրամ է, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է մինչև 1,76գ ակտիվ քլոր	Ազդող նյութ է հանդիսանում դիքլորիզոցիանուրային թթվի նատրումական աղը : Հաբը կշռում է 2.7 գրամ, որի 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է 1.5գ ակտիվ քլոր:	
	Պատվիրատուի մոտ կիրառվող լուծույթը՝ ըստ մեթոդական հրահանգի 0.168%-անոց է, որի համար ծախսվում է 12 հաբ 10լ ջրին:	Առաջարկված ապրանքի կիրառումը ըստ մեթոդական հրահանգի նույն նպատակին՝ 0.2 %-անոց լուծույթով է, որի դեպքում ծախսվում է 14 հաբ 10լ ջրին, ընդ որում որքան բարձր է քլորի տոկոսը, այնքան բարձր է շնչառական օրգանների	

		առաջացող գրգռվածությունը:	
50	Ախտահանիչ նյութ Սայդեքս Օպա կամ համարժեքը	Ախտահանիչ նյութ Ստերոքս	Տարբեր չափաբաժիններով տարբեր ազդող նյութեր «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդված
	Պահանջված քանակը 5 հատ 3.8 լիտրանոց գործարանային տարայով	Առաջարկված քանակը 5 հատ 5 լիտրանոց գործարանային տարայով	
	Ազդող նյութը օրտո-ֆտալալդեհիդ է 0,55% չափաքանակով:	Ազդող նյութը գլյուտարային ալդեհիդ է 2.7% չափաքանակով:	
	Պատվիրատուի մոտ կիրառվող լուծույթը ըստ մեթոդական հրահանգի՝ արտադրանքը նույնությամբ առանց փոփոխության	Առաջարկված ապրանքի կիրառումը ըստ մեթոդական հրահանգի՝ արտադրանքը նույնությամբ առանց փոփոխության	
51	Ախտահանիչ նյութ Անիոզիմ ԴԴ1 խտանյութ կամ համարժեքը	Ախտահանիչ նյութ Մեգաբակ	Տարբեր չափաբաժիններով տարբեր ազդող նյութեր: Պատվիրատուի կարիքից մինչև վեց անգամ քիչ (քանակական) առաջարկ: Օրենքի 3-րդ, հոդված և «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդված
	Պահանջված քանակը 100 հատ 1 լիտրանոց գործարանային տարայով:	Առաջարկված քանակը 100 հատ 1 լիտրանոց գործարանային տարայով:	
	Ազդող նյութը Գուանիդին, N,N-դիդեցիլ-N-մեթիլ-պոլի(օքսիէթիլ)ամոնիումի պրոպիոնատ- 6,3%, պոլիհեքսամեթիլենբիգուանիդին հիդրոքլորիդ 0,96%,(ՉԱՄ-5րդ սերնդի),ինչպես նաև ֆունկցիոնալ հավելումներ, եռէնզիմային կոմպլեքս(լիպազա, ալֆա-ամիլազա, պրոտեազա) մակերևույթային ակտիվ նյութեր՝ՄԱՆ-եր: Թթվահիմնային ցուցանիշը՝ PH, 6.0 միավոր է:	Ազդող նյութը դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ 7.5+0.5%, Ն,Ն-բիս (3-ամինոպրոպիլ) դոդեցիլամին 5.0+0.5%, պոլիհեքսամեթիլենբիգուանիդ հիդրոքլորիդ 2.5+0.5%, ֆունկցիոնալ և տեխնոլոգիական բաղադրիչներ, այդ թվում ոչ իոնագեն մակերևույթային ակտիվ նյութեր՝ՄԱՆ-եր, կոռոզիայի ընկճիչ, ջրի կոնդիցիոներ, հոտավետիչ, գունավորիչ և թորած ջուր: Թթվահիմնային ցուցանիշը՝ PH, 10.5 + 1.5 միավոր է:	
	Պատվիրատուի մոտ ախտահանիչ նյութը նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանում, նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրում, երեքը մեկում միաժամանակ 15րոպեի ընթացքում: Կիրառվող լուծույթը ըստ մեթոդական հրահանգի՝ 0.5%-անոց, որը ապահովում է, մանրէային (այդ թվում նաև տուբերկուլյոզից), վիրուսային (այդ թվում նաև պոլիոմելիտից),	Առաջարկված ապրանքի կիրառումը ըստ մեթոդական հրահանգի՝ բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանում և նախամանրէազերծումային մաքրում: Ախտահանման տարբեր գործընթացներում կիրառվող տարբեր %-անոց աշխատանքային լուծույթներով: Նույն 15 րոպե ժամանակահատվածում վիրահատական գործիքները	

	կանդիդոզներից և դերմատոֆիտիայից վարակազերծումը մինչև 15 րոպեում:	ախտահանելու համար համաձայն մեթոդական հրահանգի նախատեսվում է 1 %-անոց լուծույթի կիրառում, որի դեպքում ստացվում է հրավերով նախատեսվածից երկու անգամ պակաս քանակով աշխատանքային լուծույթ, իսկ տուբերկուլյոզի ժամանակ պատրաստվում է 3%-անոց լուծույթ և ախտահանումը տևում է առնվազն 60րոպե, այսինքն նախատեսվածիք վեց անգամ շատ խտանյութի ծախս և ժամանակի անընդունելի կորուստ: Մեթոդական հրահանգի թիվ 17,18,21,22 աղյուսակներ:	
53	Ախտահանիչ նյութ Հեքսանիոս Գ+Ռ կամ համարժեքը	Ախտահանիչ նյութ Մեգաբակ	Տարբեր չափաբաժիններով տարբեր ազդող նյութեր: Պատվիրատուի կարիքից մինչև վեց անգամ քիչ (քանակական) առաջարկ: Օրենքի 3-րդ, հոդված և «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդված
	Պահանջված քանակը 300 հատ 1 լիտրանոց գործարանային տարայով:	Առաջարկված քանակը 300 հատ 1 լիտրանոց գործարանային տարայով:	
	Ազդող նյութը 9.75% դիդեցիլդի-մեթիլամոնիումի քլորիդ, 1% պոլիհեքսամեթիլեն (ՉԱՄ-4րդ սերնդի), գուանիդին, ինչպես նաև գործառնական բաղադրիչներ, կոռոզիայի ինհիբիտոր, և այլ հավելյալ նյութեր: Ախտահանիչ նյութի pH–ը 6,3 - 7,7 է, որը ևս ապահովում է համատեղելիություն տարբեր մատերիալների և նյութի միջև:	Ազդող նյութը դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ 7.5+0.5%, Ն,Ն-բիս (3-ամինոպրոպիլ) դոդեցիլամին 5.0+0.5%, պոլիհեքսամեթիլենբիգուանիդ հիդրոքլորիդ 2.5+0.5%, ֆունկցիոնալ և տեխնոլոգիական բաղադրիչներ, այդ թվում ոչ իոնագեն մակերևույթային ակտիվ նյութեր՝ՄԱՆ-եր, կոռոզիայի ընկճիչ, ջրի կոնդիցիոներ, հոտավետիչ, գունավորիչ և թորած ջուր: Թթվահիմնային ցուցանիշը՝ PH, 10.5 + 1.5 միավոր է:	
	Ախտահանիչ նյութը նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների ախտահանման և նախամանրէազերծումային մաքրման համար, երկուսը մեկում միաժամանկ 15 րոպեի ընթացքում: Կիրառվող լուծույթը ըստ մեթոդական հրահանգի՝ 0.5%-անոց, որը ապահովում է, բակտերիալ (այդ թվում նաև	Առաջարկված ապրանքի կիրառումը ըստ մեթոդական հրահանգի՝ բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանում և նախամանրէազերծումային մաքրում: Ախտահանման տարբեր գործընթացներում կիրառվող տարբեր %-անոց աշխատանքային լուծույթներով: Նույն 15 րոպե	

	տուբերկուլյոզից), վիրուսային, կանդիդոզներից և դերմատոֆիտիայից վարակազերծումը մինչև 15 րոպեում:	ժամանակահատվածում վիրահատական գործիքները ախտահանելու համար համաձայն մեթոդական հրահանգի նախատեսվում է 1 %-անոց լուծույթի կիրառում, որի դեպքում ստացվում է հրավերով նախատեսվածից երկու անգամ պակաս քանակով աշխատանքային լուծույթ, իսկ տուբերկուլյոզի ժամանակ պատրաստվում է 3%-անոց լուծույթ և ախտահանումը տևում է առնվազն 60րոպե, այսինքն նախատեսվածիք վեց անգամ շատ խտանյութի ծախս և ժամանակի անընդունելի կորուստ: Մեթոդական հրահանգի թիվ 17,18,21,22 աղյուսակներ:	

Ընկերությունը ներկայացրած բողոքում նշել է, որ ԳԲԽ-80/16 բողոքի շրջանակներում «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը դիմել է ՀՀ առողջապահության նախարարությանը՝ ապրանքների համարժեքության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով՝ հարցման բովանդակությունում ներառելով ոչ միայն նյութերի կիրառման ոլորտների ու նպատակների, ախտահանման սպեկտրի համեմատությունը, այլ նաև տեխնիկական բնութագրերով նյութերից ստացվող՝ միևնույն նպատակին օգտագործվող աշխատանքային լուծույթի խտությունը դիտարկելու կարևորությունը: Նախարարության պատասխան նամակում նշվել է, որ «սանիտարահամաճարակային հսկողության ենթակա ապրանքները, ունենալով մանրէասպան, սնկասպան, վիրուսասպան հատկություն, պարունակում են որոշակի ազդող նյութեր, կոնկրետ չափաբաժիններով և եթե դրանք նույնն են, ապա այդ ախտահանիչ միջոցները համարժեք են, այսինքն՝ փոխադարձ փոխարինելի»: Սակայն գրությանը կից համեմատականում ներկայացված ապրանքների ոչ ազդող նյութերի և ոչ էլ դրանց չափաբաժինների համեմատություն չի կատարվել, չի իրականացվել պատվիրատուի կարիքին ծառայող վերջնական սպառման ապրանքի քանակական համեմատությունը հրավերով նախատեսվածի և մասնակցի առաջարկածի միջև, չեն դիտարկվել աշխատանքային լուծույթների խտությունները, այսինքն Նախարարությունը

լիարժեք չի պատասխանել գնումների աջակցման կենտրոնի հարցմանը, այլ միայն համեմատվել են կիրառման ոլորտը, նպատակը և ախտահանման սպեկտրը: «Մագտոնի» ՍՊԸ-ն կարծում է, որ ՀՀ առողջապահության նախարարության համեմատականում տեղի է ունեցել խմբագրական վրիպակ: Արդյունքում տարբեր ազդող նյութեր և դրանց տարբեր չափաբաժիններ ունեցող ապրանքները, ինչպես նաև քիչ քանակով առաջարկը շատ քանակով նախատեսվածին որակվել են որպես միմյանց համարժեք և «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքը բավարարվել է: «Մագտոնի» ՍՊԸ-ն գտնում է, որ ՀՀ առողջապահության նախարարություն կրկին հարցում կատարելով և լիարժեք համեմատություն պահանջելով՝ բողոքարկման խորհուրդը կարող է ստանալ համարժեքության մասին լիարժեք պատասխան:

2. «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն Կենտրոնին է ներկայացրել ՀՀ առողջապահության նախարարությանն ուղղված իր 17.08.2016թ. թիվ 08-258 գրությունը և վերջինիս 09.09.2016թ. թիվ ԱԿ/22.2/9887-16 պատասխանը, որում նշված են ախտահանիչ նյութերի այն ցուցանիշները, որոնցով կարող են գնահատվել ախտահանիչ նյութերի համարժեքությունը:

Պատվիրատուն գտել է, որ <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից առաջարկված նյութերը, ըստ ՀՀ առողջապահության նախարարությանն 09.09.2016թ. թիվ ԱԿ/22.2/9887-16 գրությամբ նշված համեմատական ցուցանիշների չեն հանդիսանում հրավերով նախատեսված նյութերին համարժեք:

Բացի այդ, «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի մասնագիտական հանձնաժողովը , ՀՀ Առողջապահության նախարարությանն 09.09.2016թ. թիվ ԱԿ/22.2/9887-16 գրությամբ նշված թվով 5 համեմատական ցուցանիշների հիման վրա, առաջնորդվելով ՀՀ Առողջապահության նախարարությանն կողմից հաստատված մեթոդական հրահանգներով, կատարել է, ըստ չափաբաժինների, հրավերով նախատեսված նյութերի և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկված նյութերի համարժեքության

համեմատական վերլուծություն, որի վերաբերյալ տվել է բացասական եզրակացությունը.

3. ԳԲԽ-96/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 19.09.2016թ. եզրակացությունը և առաջարկել է «Մագտոնի» ՍՊԸ-ի 02.09.2016թ. ներկայացված բողոքը մերժել հետևյալ պատճառաբանությամբ.

ԳԲԽ-80/16 բողոքի շրջանակներում բողոքում նշված ախտահանիչ միջոցների համարժեքության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով Կենտրոնը 03.08.2016թ. գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարություն, կից ներկայացնելով՝ «Պրեսեպտ», «Սայդեքս Օպա», «Անիոզիմ ԴԴ1», «Հեքսանիոս ԳՌ» ախտահանիչ միջոցների ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատված մեթոդական հրահանգները՝ խնդրելով տալ համապատասխան եզրակացություն վերոհիշյալ ախտահանիչ միջոցների կիրառման ոլորտների ու նպատակների, ախտահանման սպեկտրների՝ մանրէասպան, վիրուսասպան և սնկասպան հատկությունների համարժեքության վերաբերյալ, ինչպես նաև ախտահանիչ միջոցների տեխնիկական բնութագրերով, տվյալ ախտահանման միջոցից ստացվող՝ միևնույն նպատակներով օգտագործվող աշխատանքային լուծույթի խտությունը, որպես ելակետային չափանիշ ընդունելու հարցը, ինչը կնպաստի գնումների գործընթացի ավելի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 03.08.2016թ. գրությանն ի պատասխան՝ 15.08.2016թ. ԱԿ 9003-16 գրությամբ ՀՀ առողջապահության նախարարությունը հայտնել է, որ սանիտարահամաճարակային հսկողության ենթակա ապրանքները, ունենալով մանրէասպան, սնկասպան, վիրուսասպան հատկություն, պարունակում են որոշակի ազդող նյութեր, կոնկրետ չափաբաժիններով և եթե դրանք

նույնն են, ապա այդ ախտահանիչ միջոցները համարժեք են, այսինքն՝ փոխադարձ փոխարինելի:

Գրությամբ ներկայացված է տեղեկատվություն խնդրո առարկա հանդիսացող ախտահանիչ միջոցների կիրառման ոլորտների ու նպատակների ախտահանման սպեկտորների վերաբերյալ, ինչպես նաև տրված է գնահատական թե կոնկրետ, որ ախտահանիչ միջոցներն են միմյանց հետ համարժեք, այսինքն՝ փոխադարձ փոխարինելի:

Համաձայն ՀՀ առողջապահության վերը նշված գրության՝ «Պրեսեպտ», «Սայդեքս Օպա», «Անիոզիմ ԴԴ1», «Հեքսանիոս ԳՌ» ախտահանիչ միջոցները համարժեք են «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից թիվ 2, 50, 51 և 53-րդ չափաբաժիններով ներկայացված «Դիմաքս քլոր», «Ստերոքս», «Մեգաբակ» ախտահանիչ միջոցներին:

Վերոհիշյալի հիման վրա՝ ԳԲԽ-80/16 բողոքը քննող հանձնաժողովը 17.08.2016թ. կայացրած որոշմամբ «Խաչպար» ՍՊԸ-ի 29.07.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել է մասնակի, մասնավորապես՝ դադարեցրել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2016թ. թիվ 11 արձանագրության 1-ին կետով՝ թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը, իսկ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2016թ. թիվ 11 արձանագրության 1-ին կետով՝ թիվ 52-րդ չափաբաժնի մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ պահանջը մերժել է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ԳԲԽ-80/16 բողոքը քննող հանձնաժողովի 17.08.2016թ. որոշումը, 25.08.2016թ. թիվ 12 արձանագրության 2-րդ կետի «զ» պարբերության համաձայն՝ որոշել է «Խաչպար» ՍՊԸ-ին հայտով ներկայացված թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժինների մասով ճանաչել է հաղթող մասնակից:

Կենտրոնը ուսումնասիրելով ՀՀ առողջապահության նախարարության 09.09.2016թ. թիվ ԱԿ/22.2/9887-16 գրությունը (որով նկարագրված են ախտահանիչ նյութերի այն ցուցանիշները, որոնք համադրում են ախտահանիչ նյութերի համարժեքությունը գնահատելիս), գտել է, որ ՀՀ առողջապահության նախարարության 15.08.2016թ. ԱԿ 9003-16 գրությամբ հենց այդ ցուցանիշների համադրության

արդյունքում է տրվել եզրակացություն խնդրո առարկա հանդիսացող ախտահանիչ նյութերի համարժեքության վերաբերյալ:

4. ԳԲԽ-96/16 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-96/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների, Ընթացակարգի 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժինների մասով հայտ են ներկայացրել նաև «Մագտոնի» ՍՊԸ-ն և «Խաչպար» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի համաձայն՝ 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժիններով համապատասխանաբար պահանջվել է՝ «Պրեսպտ» կամ համարժեք, «Սայդեքս Օպա» կամ համարժեք, «Անիոզիմ ԴԴ1» կամ համարժեք և «Հեքսանիոս ԳՌ» կամ համարժեք:

3. «Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 2-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ «Պրեսպտ»-ի համարժեք՝ «Դիմաքս քլոր», 50-րդ չափաբաժնի համար՝ «Սայդեքս Օպա»-ի համարժեք՝ «Ստերոքս», 51-րդ չափաբաժնի համար՝ «Անիոզիմ ԴԴ1»-ի համարժեք՝ «Մեգաբակ», 53-րդ չափաբաժնի համար՝ «Հեքսանիոս ԳՌ»-ի համարժեք՝ «Մեգաբակ»:

4. Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 03.08.2016թ. գրությանն ի պատասխան՝ 15.08.2016թ. ԱԿ 9003-16 գրությամբ ՀՀ առողջապահության նախարարության հայտնած տեղեկատվությունը այն մասին, որ սանիտարահամաճարակային հսկողության ենթակա ապրանքները, ունենալով մանրէասպան, սնկասպան, վիրուսասպան հատկություն, պարունակում են որոշակի ազդող նյութեր, կոնկրետ չափաբաժիններով և եթե դրանք նույնն են, ապա այդ ախտահանիչ միջոցները համարժեք են, այսինքն՝ փոխադարձ փոխարինելի:

Ախտահանիչ նյութերը գնահատելով միայն 2 ցուցանիշներով, այն է՝ իրենց հատկության /մանրէասպան, սնկասպան, վիրուսասպան/ և կոնկրետ չափաբաժիններով

որոշակի ազդող նյութի ցուցանիշներով, ՀՀ Առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալը 15.08.2016թ. ԱԿ 9003-16 գրությամբ ներկայացրել է տեղեկատվություն այն մասին, որ «Պրեսեպտ», «Սայդեքս Օպա», «Անիոզիմ ԴԴ1», «Հեքսանիոս ԳՌ» ախտահանիչ միջոցները համարժեք են «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից թիվ 2, 50, 51 և 53-րդ չափաբաժիններով ներկայացված «Դիմաքս քլոր», «Ստերոքս», «Մեգաբակ» ախտահանիչ միջոցներին:

5. Բողոքում նշված ախտահանիչ միջոցների համարժեքության վերաբերյալ եզրակացություն տալու և նույն հարցի վերաբերյալ նախկինում տրամադրված տեղեկատվության վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն 17.08.2016թ. գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարությունը, խնդրելով տալ մասնագիտական եզրակացություն հրավերով նախատեսված նյութերի և «Խաչպար» ՍՊԸ-ն կողմից առաջաւկված նյութերի համաարժեքության վերաբերյալ:

6. ՀՀ Առողջապահության նախարարության 09.09.2016թ. թիվ ԱԿ/22.2/9887-16 գրությամբ տրված պարզաբանմամբ այն մասին, որ ախտահանիչ նյութերի համարժեքությունը գնահատվաում է թվով 5 համեմատական ցուցանիշներով, այն է.

ա/ Բաղադրակազմը,

բ/ Պիտանիության ժամկետը,

գ/Հակամիկրոբային ակտիվության սպեկտրը,

դ/ Թունայնության և անվտանգության ցուցանիշները,

ե/ Ախտահանիչ նյութի կիրառման մպատակը,

7. «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի մասնագիտական հանձնաժողովը, ՀՀ առողջապահության նախարարությանն 09.09.2016թ. թիվ ԱԿ/22.2/9887-16 գրությամբ նշված թվով 5 համեմատական ցուցանիշների հիման վրա, ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգների հիման վրա, կատարել է ըստ չափաբաժինների, հրավերով նախատեսված նյութերի և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկված նյութերի համարժեքության համեմատական վերլուծություն, որի վերաբերյալ տվել է բացասական եզրակացություն:

5.<u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նախկինում քննված մեկ այլ՝ ԳԲԽ-80/16 բողոքի շրջանակներում խնդրո առարկա ախտահանիչ միջոցների համարժեքության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 03.08.2016թ. գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարություն, խնդրելով տալ եզրակացություն հրավերով նախատեսված նյութերի և «Խաչպար» ՍՊԸ-ն կողմից առաջաւկված նյութերի համաարժեքության վերաբերյալ:

Գրությամբ նշված ախտահանիչ նյութերը գնահատելով ընդհամենը 2 ցուցանիշներով, այն է՝ իրենց հատկության /մանրէասպան, սնկասպան, վիրուսասպան/ և կոնկրետ չափաբաժիններով որոշակի ազդող նյութի ցուցանիշներով, ՀՀ Առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալը 15.08.2016թ. ԱԿ 9003-16 գրությամբ ներկայացրել է տեղեկատվություն այն մասին, որ «Պրեսեպտ», «Սայդեքս Օպա», «Անիոզիմ ԴԴ1», «Հեքսանիոս ԳՌ» ախտահանիչ միջոցները համարժեք են «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից թիվ 2, 50, 51 և 53-րդ չափաբաժիններով ներկայացված «Դիմաքս քլոր», «Ստերոքս», «Մեգաբակ» ախտահանիչ միջոցներին:

Վերոհիշյալի հիման վրա՝ ԳԲԽ-80/16 բողոքը քննող հանձնաժողովը 17.08.2016թ. կայացրած որոշմամբ «Խաչպար» ՍՊԸ-ի 29.07.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել է մասնակի, մասնավորապես՝ դադարեցրել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2016թ. թիվ 11 արձանագրության 1-ին կետով՝ թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը, իսկ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2016թ. թիվ 11 արձանագրության 1-ին կետով՝ թիվ 52-րդ չափաբաժնի մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ պահանջը մերժել է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ԳԲԽ-80/16 բողոքը քննող հանձնաժողովի 17.08.2016թ. որոշումը, 25.08.2016թ. թիվ 12 արձանագրության 2-րդ կետի «զ» պարբերությանբ որոշել է «Խաչպար» ՍՊԸ-ին հայտով ներկայացված թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժինների մասով ճանաչել է հաղթող մասնակից:

«Մագտոնի» ՍՊԸ-ի 02.09.2016թ. ներկայացրած բողոքի շրջանակներում խնդրո առարկա ախտահանիչ միջոցների համարժեքության վերաբերյալ եզրակացություն տալու և նույն հարցի վերաբերյալ նախկինում տրամադրված տեղեկատվությունը պարզաբանելու նպատակով «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն 17.08.2016թ. գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարությունը, խնդրելով տալ մասնագիտական եզրակացություն հրավերով նախատեսված նյութերի և «Խաչպար» ՍՊԸ-ն կողմից առաջարկված նյութերի համաարժեքության վերաբերյալ:

ՀՀ Առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարը պատասխանելով Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի 17.08.2016թ. գրությանը, իր 09.09.2016թ. թիվ ԱԿ/22.2/9887-16 գրությամբ տվել է պարզաբանում այն մասին, որ ախտահանիչ նյութերի համարժեքությունը գնահատվաում է թվով 5 համեմատական ցուցանիշներով, այն է.

ա/ Բաղադրակազմը,

բ/ Պիտանիության ժամկետը,

գ/Հակամիկրոբային ակտիվության սպեկտրը,

դ/ Թունայնության և անվտանգության ցուցանիշները,

ե/ Ախտահանիչ նյութի կիրառման մպատակը,

Փաստորեն, ՀՀ առողջապահության նախարարությունը տալով միայն ախտահանիչ նյութերի համարժեքության գնահատման ընդհանրական ցուցանիշները, ըստ էության չի անդրադարձել դեռևս իր կողմից 15.08.2016թ. ԱԿ 9003-16 գրության ներկայացված տեղեկատվության հիմնավորվածությանը, ձեռնպահ է մնացել ինչպես նշված տեղեկատվության հիմնավորվածությունը գնահատելուց, այնպես էլ հրավերով նախատեսված նյութերի և «Խաչպար» ՍՊԸ-ն կողմից առաջաւկված նյութերի համաարժեքության վերաբերյալ առավել ամբողջական եզրակացություն տալուց՝ ընդհամենը հայտնելով, որ գրությամբ նշված ախտահանիչ նյութերի վերաբերյալ տեխնիկական նորմատիվային փաստաթղթերը բացակյում են:

Խորհուրդն, համադրելով ՀՀ առողջապահության նախարարության 15.08.2016թ. ԱԿ 9003-16 և 09.09.2016թ. թիվ ԱԿ/22.2/9887-16 գրություններով ներկայացված տեղեկատվությունները, արձանագրում է, որ նրանցում առկա են անհամապատասխանություններ, որոնք հանգում են հետևյալին.

- ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարը 15.08.2016թ. 09.09.2016թ. թիվ ԱԿ/22.2/9887-16 գրությամբ հայտնել է, որ գրությամբ նշված ախտահանիչ նյութերի վերաբերյալ տեխնիկական նորմատիվային փաստաթղթեր բացակայում են, մինչդեռ անհասկանալի է, թե խնդրո առարկա <<ախտահանիչ նյութերի տեխնիկական նորմատիվային փաստաթղթերը բացակայության>> պայմաններում ինչպես և ինչ հիմքով է ՀՀ Առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալի դեռևս 15.08.2016թ. ԱԿ 9003-16 գրությամբ տրվել մասնագիտական կարծիք՝ վերոնշված ախտահանիչ նյութերի համարժեքության վերաբերյալ:

- ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարը 09.09.2016թ. թիվ ԱԿ/22.2/9887-16 գրությամբ տվել է պարզաբանում այն մասին, որ ախտահանիչ նյութերի համարժեքությունը գնահատվում է թվով 5 համեմատական ցուցանիշներով / Բաղադրակազմը, Պիտանիության ժամկետը, Հակամիկրոբային ակտիվության սպեկտրը, Թունայնության և անվտանգության ցուցանիշները, Ախտահանիչ նյութի կիրառման մպատակը/, մինչդեռ ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալի 15.08.2016թ. ԱԿ 9003-16 գրությամբ տրված կարծիքը հիմված է ընդհամենը երկու ցուցանիշների, այն է՝ իրենց հատկության

/մանրէասպան, սնկասպան, վիրուսասպան/ և կոնկրետ չափաբաժիններով որոշակի ազդող նյութի ցուցանիշներով:

Ակնհայտ է որ ՀՀ Առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալի 15.08.2016թ. ԱԿ 9003-16 գրությամբ տրված մասնագիտական կարծիքի հիմքում չեն դրվել ախտահանիչ նյութերի համարժեքության գնահատման ոչ բոլոր ցուցանիշները, հետևաբար տվյալ կարծիքը չի կարող հիմնավոր և իրավաչափ համարվել:

Անհասկանալի է նաև, թե տվյալ պարագայում կենտրոնը ինչպիսի համադրության արդյունքում է հանգել այնպիսի եզրակացության, որ ՀՀ Առողջապահության նախարարությանն 15.08.2016թ. ԱԿ 9003-16 գրությամբ տրված համարժեքության վերաբերյալ կարծիքը համապատասխանում է ՀՀ առողջապահության նախարարության 09.09.2016թ. թիվ ԱԿ/22.2/9887-16 գրությամբ նշված ցուցանիշներին և տրված է հենց այդ համադրության արդյունքում:

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի մասնագիտական հանձնաժողովը, ՀՀ առողջապահության նախարարությանն 09.09.2016թ. թիվ ԱԿ/22.2/9887-16 գրությամբ նշված թվով 5 համեմատական ցուցանիշների հիման վրա, ղեկավարվելով ՀՀ Առողջապահության նախարարությանն կողմից հաստատված մեթոդական հրահանգներով, կատարել է, ըստ չափաբաժինների, հրավերով նախատեսված նյութերի և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկված նյութերի համարժեքության համեմատական վերլուծություն, որի վերաբերյալ տվել է ներքոհիշյալ բացասական եզրակացությունը.

Չափաբաժիններ ը, Ցուցանիշը՝	Նախատեսված նյութի անվանումը և տվյալները	<<Խաչպար>> ՍՊԸ-ի առաջարկած նյութի անվանումը և տվյալները	Համեմատմա ն արդյունքները ըստ ցուցանիշի **համարժեք են/ համարժեք չեն**
Չափաբաժին 2	**Ախտահանիչ նյութ Պրեսեպտ**	**Ախտահանիչ նյութ Դիմաքս քլոր**	
Ցուցանիշ 1. <u>Բաղադրակազմ</u>	Ազդող նյութ է հանդիսանում դիքլորիզոցիանի նատրումական աղը, որը կազմում է հաբի քանակության 50%-ը: Հաբը կշռում է 5 գրամ, որի մեջ ազդող նյութի քանակը 2,5 գրամ է, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է մինչև	Ազդող նյութ է հանդիսանում դիքլորիզոցիանուրային թթվի նատրումական աղը : Հաբը կշռում է 2.7 գրամ, որի 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է 1.5գ ակտիվ քլոր:	համարժեք չեն

	1,76գ ակտիվ քլոր		
Ցուցանիշ 2. Պիտանելիության ժամկետ	Արտադրողի փակ տարայում՝ 5 տարի, աշխատանքային լուծույթինը՝ 5 օր	Արտադրողի փակ տարայում՝ 5 տարի, աշխատանքային լուծույթինը՝ 5 օր	համարժեք են
Ցուցանիշ 3. Հակամիկրոբային ակտիվության սպեկտոր	Ախտահանիչ միջոցը օժտված է հակամիկրոբային ազդեցությամբ բակտերիաների նկատմամբ՝ ներառյալ տուբերկուլյոզի, վիրուսների, կանդիտա և տրիխոֆիտիա սնկերի նկատմամբ:	Ախտահանիչ միջոցը օժտված է հակամանրէային ազդեցությամբ գրամբացասական և գրամդրական բակտերիաների նկատմամբ, այդ թվում տուբերկուլյոզի հարուցիչների՝ թեսթավորված տեռռա միկոբակտերիաների համար, ներհիվանդանոցային վարակների (այսուհետև՝ ՆՀՎ) և հատուկ վտանգավոր վարակների (ժանտախտ, տուլյարեմիա, խոլերա, լեգիոնելոզ, սիբիրյան խոց, այդ թվում՝ սպորներ), կանդիդա տեսակի սնկերի և դերմատոֆիտների, վիրուսների (այդ թվում՝ պոլիոմելիտի, արտաընդերային հեպատիտների, մարդու իմունային անբավարարության վիրուսի (այսուհետև՝ ՄԻԱՎ) ադենովիրուսի) համար:	համարժեք են
Ցուցանիշ 4. Թունավորության և անվտանգության ցուցանիշներ	3-րդ և 4-րդ դասերի վտանգավոր, ըստ դեպքերի	3-րդ և 4-րդ դասերի վտանգավոր, ըստ դեպքերի	համարժեք են
Ցուցանիշ 5. Ախտահանիչ նյութի կիրառման նպատակը	Ախտահանիչ միջոցը նախատեսված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում վարակների ժամանակ շենքերում մակերեսների, կոշտ գույքի, սանիտարատեխնիկական արքավորումների, լոգասենյակների ախտահանման համար: Պատվիրատուի մոտ կիրառվող լուծույթը՝ ըստ մեթոդական հրահանգի 0.168%-անոց է, որի համար ծախսվում է 12 հաբ 10լ ջրին:	Ախտահանիչ միջոցը նախատեսված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում վերոնշյալ մանրէային, վիրուսային, սնկային և հատուկ վտանգավոր վարակների ժամանակ շենքերում մակերեսների (այդ թվում՝ ընդհանուր մաքրում անցկացնելու համար), կոշտ գույքի, կահավորման առարկաների, սանիտարատեխնիկական արքավորումների, սպիտակեղենի, սպասքի (այդ թվում՝ լաբորատոր), հիվանդների խնամքի պարագաների, մաքրող պարագաների, պլաստմասե և ռետինե խաղալիքների և կոշիկների, ռետինե գորգերի, սանիտարական փոխադրամիջոցների ախտահանման համար: Առաջարկված ապրանքի կիրառումը ըստ մեթոդական հրահանգի նույն նպատակին՝ 0.2 %-անոց լուծույթով է, որի դեպքում ծախսվում է 14 հաբ 10լ ջրին, ընդ որում որքան բարձր է քլորի տոկոսը, այնքան բարձր է շնչառական օրգանների առաջացող գրգռվածությունը:	համարժեք չեն
Չափաբաժին 50	**Ախտահանիչ նյութ Սայդեքս Օպա**	**Ախտահանիչ նյութ Ստերոքս**	
Ցուցանիշ 1. Բաղադրակազմ	Ազդող նյութը օրտո-ֆտալալդեհիդ է 0,55% չափաքանակով:	Ազդող նյութը գլյուտարային ալդեհիդ է 2.7% չափաքանակով:	համարժեք չեն
Ցուցանիշ 2. Պիտանելիության ժամկետ	Արտադրողի փակ տարայում՝ 2 տարի, բացվելուց հետո՝ 75 օր	Արտադրողի փակ տարայում՝ 3 տարի, բացվելուց հետո՝ 3 ամիս	համարժեք են
Ցուցանիշ 3. Հակամիկրոբային ակտիվության սպեկտոր	Ախտահանիչ միջոցը օժտված է հակամանրէային ազդեցությամբ (այդ թվում տուբերկուլյոզի), հակավիրուսային (այդ թվում արտաընդերային հեպատիտների, պոլիոմելիտի, մարդու իմունային անբավարարության վիրուսի (այսուհետև՝ ՄԻԱՎ)) և հակասնկային, այդ թվում կանդիդա սնկերի, դերմատոֆիտների նկատմամբ:	Ախտահանիչ միջոցը օժտված է հակամանրէային ազդեցությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ (այդ թվում տուբերկուլյոզի, ներհիվանդանոցային վարակների (այսուհետև՝ ՆՀՎ) և անաէրոբ վարակների հարուցիչների նկատմամբ), վիրուսների (մարդու բոլոր հայտնի ախտածին վիրուսների նկատմամբ, այդ թվում ընդերային և արտաընդերային հեպատիտների (հեպատիտ Ա, Բ, Ց), մարդու իմունային անբավարարության վիրուսի (այսուհետև՝ ՄԻԱՎ) , պոլիոմելիտի,	համարժեք են

		ատիպիկ թոքաբորբի վիրուսի(SARS), գրիպի՝ այդ թվում H5N1, H1N1, հերպես վիրուսի և այլ, կանդիդա սնկերի, դերմատոֆիտների նկատմամբ, ինչպես նաև օժտված է սպորոցիդ ակտիվությամբ	
Ցուցանիշ 4. Թունավորության և անվտանգության ցուցանիշներ	4-րդ դասի քիչ վտանգավոր,	3-րդ և 4-րդ դասերի վտանգավոր, ըստ դեպքերի	համարժեք չեն
Ցուցանիշ 5. Ախտահանիչ նյութի կիրառման նպատակը	Բուժ հաստատություններում բժշկական նշանակության ռետինե, մետաղյա, ապակե, օպտիկական տարբեր առարկաների (այդ թվում կոշտ և ճկուն էնդոսկոպերի և դրանց օժանդակ մասերի, մետաղական գործիքների) ախտահանման համար վիրուսային, մանրէային և սնկային ծագումնաբանության վարակների դեպքում: էնդոսկոպերի բարձր մակարդակի ախտահանման համար: Պատվիրատուի մոտ կիրառվող լուծույթը ըստ մեթոդական հրահանգի՝ արտադրանքը նույնությամբ առանց փոփոխության	Ախտահանիչ միջոցը կիրառվում է տարբեր նյութերից (ռետինե, պլաստմասե, ապակյա, մետաղյա) բժշկական նշանակության արտադրանքի և բժշկական տեխնիկայի, այդ թվում՝ վիրաբուժական, ատամնաբուժական գործիքների, կոշտ և ճկուն էնդոսկոպների և դրանց գործիքների ախտահանման, բարձր մակարդակի ախտահանմա և մանրէազերծման համար: Առաջարկված ապրանքի կիրառումը ըստ մեթոդական հրահանգի՝ արտադրանքը նույնությամբ առանց փոփխության	համարժեք են
51	**Ախտահանիչ նյութ Անիոզիմ ԴԴ1 խտանյութ**	**Ախտահանիչ նյութ Մեգաբակ**	
Ցուցանիշ 1. Բաղադրակազմ	Ազդող նյութը Գուանիդին, N,N-դիդեցիլ-N-մեթիլ-պոլի(օքսիէթիլ)ամոնիումի պրոպիոնատ- 6,3%, պոլիհեքսամեթիլենբիգուանիդին հիդրոքլորիդ 0,96%,(ՉԱՄ-5րդ սերնդի),ինչպես նաև ֆունկցիոնալ հավելումներ, եռէնզիմային կոմպլեքս(լիպազա, ալֆա-ամիլազա, պրոտեազա) մակերևույթային ակտիվ նյութեր՝ՄԱՆ-եր: Թթվահիմնային ցուցանիշը՝ PH, 6.0 միավոր է:	Ազդող նյութը դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ 7.5+0.5%, Ն,Ն-բիս (3-ամինոպրոպիլ) դոդեցիլամին 5.0+0.5%, պոլիհեքսամեթիլենբիգուանիդ հիդրոքլորիդ 2.5+0.5%, ֆունկցիոնալ և տեխնոլոգիական բաղադրիչներ, այդ թվում ոչ իոնագեն մակերևույթային ակտիվ նյութեր՝ՄԱՆ-եր, կոռոզիայի ընկճիչ, ջրի կոնդիցիոներ, հոտավետիչ, գունավորիչ և թորած ջուր: Թթվահիմնային ցուցանիշը՝ PH, 10.5 + 1.5 միավոր է:	համարժեք չեն
Ցուցանիշ 2. Պիտանելիության ժամկետ	Արտադրողի փակ տարայում՝ 3 տարի, աշխատանքային լուծույթինը՝ 3 օր	Արտադրողի փակ տարայում՝ 5 տարի, աշխատանքային լուծույթինը՝ 41 օր	համարժեք են
Ցուցանիշ 3. Հակամիկրոբային ակտիվության սպեկտոր	Ախտահանիչ նյութն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամդրական և գրամբացասական մարէների (ներառյալ՝ տուբերկուլոզի միկոբակտերիաները), վիրուսների (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը)(H5N1),(A H1N1), սնկերի (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) նկատմամբ:	Ախտահանիչ միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների (ներառյալ տուբերկուլյոզի միկրոբակտերիաները), վիրուսների (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմելիտը, H5N1, AH1N1, հերպեսի, ադենովիրուսների), սնկերի (այդ թվում կանդիդա և դերմատոֆիտիա), հատուկ վտանգավոր վարակների հարուցիչների (ժանտախտ, խոլերա, տուլարեմիա) նկատմամբ	համարժեք են
Ցուցանիշ 4. Թունավորության և անվտանգության ցուցանիշներ	4-րդ և 5-րդ դասերի քիչ վտանգավոր, ըստ դեպքերի	3-րդ և 4-րդ դասերի վտանգավոր, ըստ դեպքերի	համարժեք չեն
Ցուցանիշ 5. Ախտահանիչ նյութի կիրառման նպատակը	Պատվիրատուի մոտ ախտահանիչ նյութը նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանում, նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրում, երեքը մեկում միաժամանկ 15րոպեի ընթացքում: Կիրառվող լուծույթը ըստ մեթոդական	Ապրանքի կիրառումը՝ բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանում և նախամանրէազերծումային մաքրում: Ախտահանման տարբեր գործընթացներում կիրառվող տարբեր %-անոց աշխատանքային լուծույթներով: Նույն 15 րոպե ժամանակահատվածում	համարժեք չեն

	հրահանգի՝ 0.5%-անոց, որը ապահովում է, մանրեային (այդ թվում նաև տուբերկուլյոզից), վիրուսային (այդ թվում նաև պոլիոմելիտից), կանդիդոզներից և դերմատոֆիտիայից վարակազերծումը մինչև 15 րոպեում:	վիրահատական գործիքները ախտահանելու համար համաձայն մեթոդական հրահանգի նախատեսվում է 1 %-անոց լուծույթի կիրառում, իսկ տուբերկուլյոզի ժամանակ պատրաստվում է 3%-անոց լուծույթ և ախտահանումը տևում է առնվազն 60րոպե:	
53	**Ախտահանիչ նյութ Հեքսանիոս Գ+Ռ**	**Ախտահանիչ նյութ Մեգաբակ**	
Ցուցանիշ 1. Բաղադրակազմ	Ազդող նյութը 9.75% դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ, 1% պոլիհեքսամեթիլեն (ՉԱՄ-4րդ սերնդի), գուանիդին, ինչպես նաև գործառնական բաղադրիչներ, կոռոզիայի ինհիբիտոր, և այլ հավելյալ նյութեր: Ախտահանիչ նյութի pH–ը 6,3 - 7,7 է, որը ևս ապահովում է համատեղելիություն տարբեր մատերիալների և նյութի միջև:	Ազդող նյութը դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ 7.5+0.5%, Ն,Ն-բիս (3-ամինոպրոպիլ) դոդեցիլամին 5.0+0.5%, պոլիհեքսամեթիլենբիգուանիդ հիդրոքլորիդ 2.5+0.5%, ֆունկցիոնալ և տեխնոլոգիական բաղադրիչներ, այդ թվում ոչ իոնագեն մակերևույթային ակտիվ նյութեր՝ՄԱՆ-եր, կոռոզիայի ընկճիչ, ջրի կոնդիցիոներ, հոտավետիչ, գունավորիչ և թորած ջուր: Թթվահիմնային ցուցանիշը՝ PH, 10.5 + 1.5 միավոր է:	համարժեք չեն
Ցուցանիշ 2. Պիտանելիության ժամկետ	Արտադրողի փակ տարայում՝ 3 տարի, աշխատանքային լուծույթինը՝ 14 օր	Արտադրողի փակ տարայում՝ 5 տարի, աշխատանքային լուծույթինը՝ 41 օր	համարժեք են
Ցուցանիշ 3. Հակամիկրոբային ակտիվության սպեկտոր	Ախտահանիչ նյութն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամդրական և գրամբացասական մարէների (ներառյալ՝ տուբերկուլոզի միկոբակտերիաները), վիրուսների (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը), կանդիդա և դերմատոֆիտոն ցեղի նկատմամբ:	Ախտահանիչ միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների (ներառյալ տուբերկուլյոզի միկրոբակտերիաները), վիրուսների (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմելիտը, H5N1, AH1N1, հերպեսի, ադենովիրուսների), սնկերի (այդ թվում կանդիդա և դերմատոֆիտիա), հատուկ վտանգավոր վարակների հարուցիչների (ժանտախտ, խոլերա, տուլարեմիա) նկատմամբ	համարժեք են
Ցուցանիշ 4. Թունավորության և անվտանգության ցուցանիշներ	4-րդ և 5-րդ դասերի քիչ վտանգավոր, ըստ դեպքերի	3-րդ և 4-րդ դասերի վտանգավոր, ըստ դեպքերի	համարժեք չեն
Ցուցանիշ 5. Ախտահանիչ նյութի կիրառման նպատակը	Ախտահանիչ նյութը նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների ախտահանման և նախամանրէազերծումային մաքրման համար, երկուսը մեկում միաժամանակ 15 րոպեի ընթացքում: Կիրառվող լուծույթը ըստ մեթոդական հրահանգի՝ 0.5%-անոց, որը ապահովում է, բակտերիալ (այդ թվում նաև տուբերկուլյոզից), վիրուսային, կանդիդոզներից և դերմատոֆիտիայից վարակազերծումը մինչև 15 րոպեում:	Ապրանքի կիրառումը՝ բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանում և նախամանրէազերծումային մաքրում: Ախտահանման տարբեր գործընթացներում կիրառվող տարբեր %-անոց աշխատանքային լուծույթներով: Նույն 15 րոպե ժամանակահատվածում վիրահատական գործիքները ախտահանելու համար համաձայն մեթոդական հրահանգի նախատեսվում է 1 %-անոց լուծույթի կիրառում, իսկ տուբերկուլյոզի ժամանակ պատրաստվում է 3%-անոց լուծույթ և ախտահանումը տևում է առնվազն 60րոպե:	համարժեք չեն

Խորհուրդը բողոքն ուսումնասիրելով պատշաճ մանրամասնությամբ, բողոքում առկա փաստաթղթերը և ապացույցները գնահատելով՝ վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ բողոքի լուծման համար բավարարության տեսանկյունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մագտոնի» ՍՊԸ-ի 02.09.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել. դադարեցնել «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի 2016թ. մայիսի 25-ի կայացած նիստի «Խաչպար» ՍՊԸ-ին ընթացակարգի թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժիններով հաղթող ճանաչելու վերաբերյալ թիվ 3 որոշումը և նշված չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ **Ավետիսյան Վարդան**

Անդամներ՝ **Նազարյան Մանե**

Աղաջանյան Սուսաննա